Ռիսկի խմբերի անձանց շրջանում գրիպի դեմ պատվաստումների խոչընդոտների և խթանող գործոնների բացահայտում, 2025

Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի Դաշտային համաճարակաբանության ուսումնական ծրագրի (EESC FETP) շրջանակներում իրականացվել է «Ռիսկի խմբերի անձանց շրջանում գրիպի դեմ պատվաստումների խոչընդոտների և խթանող գործոնների բացահայտում» հետազոտությունը՝ հասկանալու համար պատվաստումների խոչընդոտներն ու խթանիչ գործոնները: Հետազոտության արդյունքները կծառայեն որպես հիմք՝ իրականացնելու թիրախային միջոցառումներ ռիսկի խմբերի շրջանում սեզոնային գրիպի դեմ պատվաստումների պահանջարկի բարձրացման նպատակով:

Հետազոտության հիմքում ընկած է ռիսկի խմբերի շրջանում սեզոնային գրիպի դեմ պատվաստման վերաբերյալ գիտելիքների, վերաբերմունքի և վարքագծի (KAP) հարցման իրականացումը:

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ապահովելու Հայաստանում ռիսկի խմբերի շրջանում սեզոնային գրիպի դեմ պատվաստումների պահանջարկի բարձրացումը և պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների բարելավումը: